6955

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N 6770

Ք. Երևան 18.04.2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գագիկ Սաֆարյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտորի պաշտոնակատար Թեհմինա Մարությանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115. Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի մարտի 23-ի N 462-Ա հրամանով հաստատված դրամաշնորհի հատկացման մրցույթի հանձնաժողովի 2022 թվականի մարտի 18-ի N 06/22 ամփոփիչ արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի ապրիլի 14-ի N 653-Ա/2 հրամանը՝ «Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով՝ համաձայն պայմանագրի Հավելված N 2-ում ներկայացված

ֆինանսական նախահաշվի, կազմակերպությանը հատկացնել 2,875.440 (երկու միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ գումար՝ ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և տուրքերը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ Միջոցառում) ներկայացված են սույն Պայմանագրի Հավելված N 1-ում, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամաշնորհային ծրագիրը՝ Հավելված N 5-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշումներով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝ Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված առանձին Միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. սույն Պայմանագիրն ՀՀ օրենսդրությամբ կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.2.3. անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. կատարել Ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. իրականացնել Ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. իրականացված Միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.2. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.3. սույն Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.4. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.5. Պետական մարմնի կողմից առանձին Միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.6. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.7. ավարտված Միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել Պետական մարմին 7.3. կետով սահմանված ժամկետում, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.8. Պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է Պետական մարմնի և Կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.minfin.am հասցեով գործող կայքի «Դրամաշնորհներ» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում) պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը Հավելված N 4) և հաշվետվությունը: Ընդ որում Կազմակերպությունը հանձնման-ընդունման ակտը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պետական մարմինը պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2. կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կազմակերպության նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե Պայմանագրի 4.2. կետով սահմանված ժամկետում Պետական մարմինը չի ընդունում Պայմանագրի 4.1. կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և

Պայմանագրի 4.2. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով Կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1.-ին կետում սահմանված գումարը Կազմակերպությանն է հատկացվում համաձայն վճարման ժամանակացույցի (Հավելված N 3):

Սահմանված գումարի 80%-ը հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո, իսկ 20%-ը պայմանագրի 4.1.-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4) ստորագրելուց հետո՝ Կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

5.3. Համաձայն «ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2022 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի Հավելված N 1-ում նշված Ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում Կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1. կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման և հաշվետվությունների ներկայացման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2. և 6.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ Պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության, հաշվետվությունների ներկայացման ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7.2. Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

7.3.Պայմանագրով նախատեսված Կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.4. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը մինչև 2022 թ. դեկտեմբերի 10-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թ. դեկտեմբերի 20-ը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, Պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության Պետական մարմնի կողմից սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 5 հավելվածներով հաստատվում են, համապատասխանաբար, ծրագրի միջոցառումը, նախահաշիվը, վճարման ժամանակացույցը, հանձնման-ընդունման ակտը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամաշնորհային ծրագիրը, որոնք հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ Պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը Պետական մարմինը այն ուղարկում է նաև Կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.4. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.5. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

9.6. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ **Գագիկ Սաֆարյան** /ստորագրություն/ Կ.Տ.	«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ Գորիս, Ավանգարդ 2 gorissu@mail.ru Հ ՖՆ կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900288000012 ՀՎՀՀ 09210606 Ռեկտորի պ/կ՝ **Թեհմինա Մարության** /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված 1
2022 թ. ապրիլի 18 -ին
կնքված N 4/1 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Դրամաշնորհի միջոցների հաշվին իրականացվող միջոցառման						
	անվանումը	նկարագիրը	կազմակերպության կողմից կատարման ենթակա գործողությունները	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	միջոցառման իրականացման վերջնաժամկետը	հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Նախապատրաստական աշխատանքներ	Կարողությունների զարգացմանն ուղղված գործիքների և մեթոդաբանությունների նախագծում	Ուսումնական տարածքների նախապատրաստում: Համապատասխան տեխնիկական միջոցների, սարքավորումների և ծրագրային ապահովման նախապատրաստում: Վերապատրաստող համապատասխան մասնագետների հրամանագրում: Մեթոդաբանությունների, գործիքների և ուղեցույցների նախագծում:	Հաստիքացուցակ, հրամաններ, վերապատրաստման թեմատիկ պլանավորումներ	30.04.2022 թ.	Ներկայացվում են ծրագրի մոնիտորինգի բաղադրիչից ստացված տվյալները 15.04.2022 – 30.04.2022 ժամկետի համար	443.200
2	Երիտասարդների շրջանում իրազեկության բարձրացում անձնական և կարիերայի զարգացման համար առկա ռիսկերի վերաբերյալ	Կոնտիգենտի հավաքագրում	Կազմակերպել ամսական իրազեկող հանդիպումներ թիրախային խմբերի հետ և նպաստել հանրային իրազեկվածությանը:	Վերապատրաստման ենթակա ձևավորված թիրախային խմբեր, հրամաններ, ժամանակացույցեր	30.06.2022 թ.	Ներկայացվում են միջանկյալ հաշվետվություններից ստացված տվյալները միջոցառումների իրականացման ողջ ընթացքում	170.000
		Երիտասարդների գբաղվածության խթանման ծառայությունների զարգացմանն ուղղված	Կազմակերպել կանոնավոր (օր. ՝ եռամսյակային) շահագրգիռ կողմերի թեմատիկ խորհրդակցություններ ՝ ուղղված իրազեկման բարձրացմանը	Կնքել համագործակցության հուշագիր շահագրգիռ կազմակերպությունների միջև	30.11.2022 թ.		
			Կազմել թափուր աշխատատեղերի ցանկ և ապահովել	Թափուր աշխատատեղե			

		միջոցառումներ	այդ մասով իրազեկումներ	րի բազա			
3	TOT վերապատրաստումներ	Վերապատրաստող մասնագետների վերապատրաստմանն ուղղված դասընթացներ	Իրականացնել վերապատրաստող մասնագետներից կազմված (մեկ խմբի համար) թվային հմտությունների գծով կարողությունների զարգացմանն ուղղված 15 ժամ ծավալով TOT վերապատրաստում:	Վերապատրաստված մասնագետներ, հավաստագրեր	15.05.2022 թ.	Ներկայացվում են միջանկյալ հաշվետվություններից ստացված տվյալները 15.04.2022-15.05.2022 ժամկետի համար	205.000
			Իրականացնել վերապատրաստող մասնագետներից կազմված (մեկ խմբի համար) արդյունավետ դասավանդման ինտերակտիվ մեթոդաբանության գծով կարողությունների զարգացմանն ուղղված 15 ժամ ծավալով TOT վերապատրաստում	Վերապատրաստված մասնագետներ, հավաստագրեր	20.06.2022 թ.	Ներկայացվում են միջանկյալ հաշվետվություններից ստացված տվյալները 20.05.2022-20.06.2022 ժամկետի համար	
4	Վերապատրաստման բովանդակության ստեղծում	Երիտասարդների կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման մոդուլների մշակում	Մոդուլների մշակում, հաստատում	15 մոդուլների փաթեթներ	30.06.2022 թ.	Ներկայացվում են միջանկյալ հաշվետվություններից ստացված տվյալները 30.04.2022 – 30.06.2022 ժամկետի համար	1,468.000

	Վերապատրաստման դասընթացներ	Երիտասարդների կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստումներ	Կազմակերպել կանոնավոր վերապատրաստումներ	Առնվազն 150 վերապատրաստումներ անցած երիտասարդներ, հավաստագրեր, հրամաններ	30.11.2022 թ.	Ներկայացվում են միջանկյալ հաշվետվություններից ստացված տվյալները 01.06.2022 – 30.11.2022 ժամկետի համար	
5	Որակի վերահսկում և մշտադիտարկում	Կազմել բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ	Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացվում է մոնիթորինգ	Հանձնման-ընդունման ակտեր, Հաշվետվություններ	10.12.2022 թ.	Ներկայացվում են ծրագրի իրականացման մասին միջանկյալ և ավարտական հաշվետվություններ միջոցառումների իրականացման ամբողջ ընթացքում	110.000
	Ընդամենը						**2,396.200**
	ԱԱՀ						**479.240**
	ԸՆԴԱՄԵՆԸ						**2,875.440**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար **Գագիկ Սաֆարյան**

/ստորագրություն/

L.S.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ

Գորիս, Ավանգարդ 2, gorissu@mail.ru

Հ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Հ/Հ 90028800001, ՀՎՀՀ 09210606

Ռեկտոր **Թեմիսա Մարության**

/ստորագրություն/

L.S.

Հավելված 2
2022 թ. մայիսի 18-ին
կնքված N 15/10 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու *«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ*
Ծրագրի անուն *Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում*

Ծրագրի տևողություն 2022թ ապրիլ-2022թ-դեկտեմբեր

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)
	Աշխատավարձ՝ ներառյալ հարկերը				
Ա					
1.1	Ծրագրի ղեկավար	ամիս	8	30000	240000
1.2	Ծրագրի համակարգող	ամիս	8	29000	232000
1.3	Հաշվապահ	ամիս	8	18000	144000
1.4	Կադրերի մասնագետ	ամիս	8	10000	80000
1.5	Դասընթացավար (Վերապատրաստող մասնագետներ)	ժամ	308	3500	1078000
1.6	Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների պատասխանատու	ամիս	8	13000	104000
1.7	Տեխնիկական աշխատանքների պատասխանատու	ամիս	8	10000	80000
	Ընդամենը Ա			**1958000**	
Բ	**Ծրագրային ծախսեր**				
2.1	Դասընթացավար (Վերապատրաստող մասնագետների վերապատրաստում (թվային հմտություններ))	ժամ	15	3500	52500
2.2	Դասընթացավար (Վերապատրաստող մասնագետների վերապատրաստում (դասավանդման ինտերակտիվ, ոչ ֆորմալ մեթոդաբանություն))	ժամ	15	3500	52500
	Ընդամենը Բ			**105000**	
Գ	**Վարչական ծախսեր**				
3.1	Թղթապանակ	հատ	150	300	45000
3.2	Նոթատետր	հատ	150	170	25500
3.3	Գրիչ կապույտ	հատ	150	100	15000
3.4	Մարկեր ընդգծող	հատ	150	200	30000
3.5	Նշումների թուղթ 3x3 գունավոր. կպչուն	հատ	180	250	45000
3.6	Թուղթ A4	տուփ	15	2000	30000
3.7	Պրինտերի փոշի	հատ	2	4000	8000

3.8	Ֆլիպչարտի թուղթ	կգ	10	2000	20000
3.9	Մարկեր գրատախտակի /տարբեր գույնի/	հատ	50	400	20000
3.10	Կպչուն ժապավեն /լայն/	հատ	2	350	700
3.11	Ֆլեշ կրիչ	հատ	2	3000	6000
3.12	Սերտիֆիկատի տպագրություն	հատ	170	200	34000
3.13	Zoom բաժանորդային փաթեթ	հատ	3	8000	24000
3.14	Հայտարարություն թերթում	հատ	1	10000	10000
3.15	Ինտերնետային գովազդի ակտիվացում Facebook միջավայրում	օր	8	2500	20000
	Ընդամենը Դ			**333200**	
Ընդամենը				**2396200**	
ԱԱՀ				**479240**	
ԸՆԴԱՄԵՆԸ				**2875440**	

**ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:*

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գագիկ Սաֆարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ
Գորիս, Ավանգարդ 2
gorissu@mail.ru
Հ ՖՆ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900288000012
ՀՎՀՀ 09210606
Ռեկտոր՝ պ/կ
Թեհմինա Սարգսյան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 3
2022թ. [illegible] -ին
կնքված N [illegible] պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ

«1115. Երիտասարդության ծրագիր» «11001. Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» «Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում» ծրագրի														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Մրցույթի պլանով նախատեսված (CPV) կոդը	Կատարման դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
«ԵՔ-ԴՄ-ՈՖ 02/22»	99999999/	-	-	-	2,300.352	2,300.352	2,300.352	2,300.352	2,300.352	2,300.352	2,300.352	2,300.352	2,875.440	**2,875.440**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3 Կառավարական տուն N 2	Գորիս, Ավանգարդ 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	gorissu@mail.ru
Հ/Հ 900011032472	ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02698732	Հ/Հ 900288000012
Գլխավոր քարտուղար՝	ՀՎՀՀ 09210606
Գագիկ Սաֆարյան	Ռեկտորի պ/կ՝
/ստորագրություն/	**Թեհմինա Ասրյան**
Կ.Տ.	/ստորագրություն/
	Կ.Տ.

ԿԱԶՄԵՑ՝

Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի գլխավոր մասնագետ

..... Լ. Մուրադյան

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ ..... Ն. Վարդանյան

Ֆինանսաբյուջետային վարչության պետ ..... Ա. Թադևոսյան

Գլխավոր քարտուղարի տեղակալ..... Վ. Գասպարյան

Հավելված N 4
2022 թ. մայիսի 18-ին
կնքված N պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պետական մարմին
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱԿՏ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «_____» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պետական մարմինը և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ ներկայացված --- -- հաշվետվությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը իրականացրել է հետևյալ միջոցառումները՝

N	Իրականացված միջոցառման							
	անվանումը	գործառույթի համառոտ նկարագիրը	արդյունքը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրի	փաստացի	ըստ պայմանագրի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և հաշվետվությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ	Կ.Տ.

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Երևան, Վ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար՝ **Գագիկ Սաֆարյան** /ստորագրություն/ L.S. 02698732	«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ Գորիս, Ավանգարդ 2 gorissu@mail.ru Հ ՖՆ կենտրոնական գանձապետարան Հ/Հ 900288000012 ՀՎՀՀ 09210606 Ռեկտորի պ/կ՝ **Թեհմինա Մարության** /ստորագրություն/ L.S. 09210606

ԿԱԶՄԵՑ՝

Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի գլխավոր մասնագետ

..... Լ. Մուրադյան

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Մշակութային և սպորտային ծրագրերի ֆինանսավորման բաժնի պետ ..... Ն. Վարդանյան

Ֆինանսաբյուջետային վարչության պետ ..... Ա. Թադևոսյան

Գլխավոր քարտուղարի տեղակալ..... Վ. Գասպարյան

Հավելված N 5
2022 թ. մայիսի 12-ին
կնքված N 6310 պայմանագրի

«ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԱՐՑԱԽՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ, ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՆԵՐԱԶԴՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՇԵՐՏԵՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ) ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»

դրամաշնորհային ծրագիր

Համառոտագիր

Ներկայացրեք ծրագրի ամփոփ նկարագիրը:

Ծրագիրը ներառում է ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորություններ, որոնք թույլ են տալիս երիտասարդներին (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) Այունիքի մարզում ստանալ ուսումնառության ոչ ֆորմալ մոդելների ինստիտուցիոնալ կիրառմամբ որակյալ, զանգվածային և անհատականացված կրթություն: Ծրագիրը տրամադրում է աշխատաշուկայում արդյունավետ ներգրավման համար անհրաժեշտ մասնագիտական և վերմասնագիտական կարողություններ հետևյալ մոդուլներից.

1. *Հաշվապահական հաշվառում սկսնակների համար (32 ժամ)*
2. *Գնումների գործընթացի կազմակերպում (32 ժամ)*
3. *ՀՀ աշխատանքային օրենսդրություն (32 ժամ)*
4. *Մենեջմենթ (բազային) (20 ժամ)*
5. *Համակարգչային հմտություններ (20 ժամ)*
6. *Թվային դասավանդման հմտություններ (20 ժամ)*
7. *Ադրբեջաներեն (բազային) (32 ժամ)*
8. *Անգլերեն լեզու (բազային) (32 ժամ)*
9. *Ռուսաց լեզու (32 ժամ)*
10. *Մեդիագրագիտություն (6 ժամ)*
11. *Ներգրավված քաղաքացի (15 ժամ)*
12. *Հաղորդակցման հմտություններ և հոգեբանական տեխնիկաներ (10 ժամ)*
13. *Սթրեսակայունությունը տարբեր տարիքային և աշխատանքային փորձ ունեցող անձանց մոտ (5 ժամ)*
14. *Հանրային խոսք: Խոսքի մշակույթ (15 ժամ)*
15. *Գրավոր խոսք (5 ժամ)*

Ծրագրի իրականացումը կունենա արդյունքային ազդեցություն համայնքային երիտասարդության վրա.

- *Նոր գիտելիքներ և հմտություններ,*
- *Ինքնազարգացման և ինքնարտահայտման հնարավորություններ,*
- *Աշխատաշուկայում մրցունակություն և մոտիվացիա,*
- *Համայնքային կյանքի աշխուժացում,*
- *Վարքագծի բարելավում համայնքային կառավարման գործընթացներում ներգրավվածության և մասնակցության խթանման միջոցով:*

ՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հիմնախնդրի և կարիքի հիմնավորում
Նկարագրեք ներկա վիճակը և հիմնավորեք՝ ինչու է անհրաժեշտ ծրագիրը:

Գլոբալիզացիան և ժամանակակից կյանքի առանձնահատկությունները, արցախյան վերջին պատերազմը, հետպատերազմական վիճակը Սյունիքի մարզում առաջադրում են բազմաթիվ խնդիրներ կրթության ոլորտում, որոնք հարկադրում են որոնել և ներդնել նոր կրթական տեխնոլոգիաներ: Իր հերթին մասնագիտական կողմնորոշման խնդիրը առավել քան կարևորվում է մարզում ապրող երիտասարդների համար: Գործատուները, որպես շահագրգիռ կողմ, գրեթե ներգրավված չեն մասնագիտական կողմնորոշման գործընթացներին: Ինչպես վկայում է պաշտոնական վիճակագրությունը, մի կողմից՝ մարզերում թափուր աշխատատեղերը շատ հաճախ չեն համալրվում մասնագետներ չլինելու պատճառով, մյուս կողմից՝ երիտասարդների շրջանում արձանագրվում են գործազրկության միջինից բարձր ցուցանիշներ: Գորիսի պետական համալսարանը գիտակցում է, որ օրախնդիր է կրթության շարունակական զարգացումը, մատչելիության ապահովումը՝ կենտրոնում ունենալով որակյալ, զանգվածային և անհատականացված կրթություն: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է, հիմք ընդունելով Հայաստանում ու արտերկրում բարձրագույն կրթության համակարգում ոչ ֆորմալ կրթության ներդրման շրջանակներում ձեռքբերված փորձը, Գորիսի պետական համալսարանում մշակել ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպման այնպիսի մոդել, որը կարող է հաղթահարել կրթություն ստանալը և մասնագիտական կողմնորոշման ծրագրերում երիտասարդների ներգրավմանը խոչընդոտող բազում հանգամանքներ (հետպատերազմական իրավիճակ, սահմանամերձ և սահմանապահ դարձած համայնքներ, սոցիալական դրություն, համաճարակային իրավիճակ, բնակավայրի հեռավորություն և այլն): Ծրագիրը կարևորվում է Սյունիքի մարզում ուսումնառության ոչ ֆորմալ մոդելների ինստիտուցիոնալ կիրառմամբ որակյալ, զանգվածային և անհատականացված կրթություն ապահովելու անհրաժեշտությամբ: Սակայն պետք է ընդունել, որ նոր մոդելով որակյալ ուսումնական նյութերի մշակումն ու ներդրումը ծավալուն և թանկ գործընթաց է, և մարզային համալսարանը չի կարող մասնակցել այդ գործընթացին առանց լրացուցիչ ֆինանսական աջակցության:

Կազմակերպության փորձառությունը

Ներկայացրեք կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպես նաև նշված ոլորտում իրականացված ծրագրերը (ժամանակահատված, դրամաշնորհատու կազմակերպություն, բյուջե, նպատակ, արդյունքներ):

"Գորիսի պետական համալսարան© ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական, ոչ առևտրային, կրթական, գիտահետազոտական և մշակութային կազմակերպություն է, որն իր հիմնական առաքելություններից է համարում տարածաշրջանի կրթության, մշակույթի, արդյունաբերության, իրավական դաշտի ու սպասարկման ոլորտի կարիքներին ու զարգացման հնարավորություններին համահունչ կրթական-հետազոտական ծրագրերի ու ծառայությունների, համագործակցային ծրագրերի պատշաճ իրականացումը՝ նպատակ ունենալով ստեղծել նաև կրթության շարունակականությունն ապահովող անհրաժեշտ պայմաններ՝ ուսումնառության և դասավանդման նորագույն մեթոդների կիրառման համար: Համալսարանը վերապատրաստումների ոլորտում արդյունավետ կերպով իրականացրել է հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կադրերի համար նախատեսված պետական վերապատրաստումներ. սկսած 2019 թ.-ից ձեռք է բերվել թվով յոթ լիցենզիա (<< ԿԳՄՍ նախարարի հրամաններ՝ հր. թիվ 422-Ա/2 (29.04.2019 թ.) և հր. թիվ 1041-Ա/2 (15.11.2019 թ.), հր. թիվ 1187-Ա/2 (09.09.2020 թ.), հր. թիվ 887-Ա/2 (03.06.2021 թ.), հր. թիվ 780-Ա/2 (18.05.2021 թ.), հր. թիվ 894-Ա/2 (04.06.2021 թ.), հր. թիվ 1557-Ա/2 (17.09.2021 թ.)): Իրականացրած վերապատրաստումների մասին ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է ստորև.

#	Իրականացված ծրագրերի	Ֆինանսավորող	Ծրագրի	Մասնակիցների	Իրականացրած մոդուլների

	անվանումը	կազմակերպությունը	սկիզբը, ավարտը	թիվը / Հավաստագրված ների թիվը	ցանկը
1	ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով պետական վերապատրաստում	Ինքնաֆինանսավորում	2020 թ. – 2020 թ.	3/3	1) Հանրակրթության բնագավառի օրենսդրություն, 2) Իրավունքի հիմունքներ, 3) Գնումների գործընթացի կազմակերպում, 4) Կիրառական հաշվապահություն, 5) Կիրառական մանկավարժություն և հոգեբանություն, 6) Տեքստային և գործարար փաստաթղթերի մշակման տեխնոլոգիա, 7) Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը ուսումնական գործընթացում, 8) Արժեքների և վերաբերմունքի ձևավորումը առարկայական դասաժամերին, 9) Գնահատում, 10) Ներառական կրթություն, 11) Պլանավորում:
2	ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու նպատակով պետական վերապատրաստում	Ինքնաֆինանսավորում	2021 թ. - 2021 թ.	18/14	
3	ՀՈՒՀ հերթական արտեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում	ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններ	2021 թ. - 2021 թ.	47/47	

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Համառոտ կերպով նկարագրել՝ որն է ծրագրի նպատակը և ինչ արդյունքներ են ակնկալվում ծրագրի ավարտին:

Ծրագրի նպատակն է աջակցել Գորիսի պետական համալսարանին՝ զարգացնելու ոչ ֆորմալ ուսուցման վրա հիմնված լրացուցիչ, շարունակական կրթության համակարգը, որը կայուն կերպով կապահովվի ակադեմիական և ոչ ակադեմիական միջավայրերում երիտասարդներին հաջողություններ ունենալու համար անհրաժեշտ կարողություններ՝ հատուկ ուշադրություն դարձնելով արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների վրա:

Ելնելով ծրագրի նպատակից՝ առանձնացվել է խնդիրների երկու խումբ՝

- Շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացում,
- Երիտասարդների զբաղվածության խթանման ծառայությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ:

Ակնկալվող արդյունքները՝

- Կարճաժամկետ վերապատրաստումների ինստիտուցիոնալ համակարգ,
- Նոր գիտելիքներ և հմտություններ,

- *Ինքնազարգացման և ինքնարտահայտման հնարավորություններ,*
- *Աշխատաշուկայում մրցունակություն և մոտիվացիա,*
- *Համայնքային կյանքի աշխուժացում,*
- *Վարքագծի բարելավում համայնքային կառավարման գործընթացներում ներգրավվածության և մասնակցության խթանման միջոցով:*

Գործողություններ

Որոնք են այն կոնկրետ գործողությունները և մեթոդները ծրագրի նպատակի իրագործմանն ուղղված յուրաքանչյուր խնդրի համար: Ներկայացնել ամսական կտրվածքով աշխատանքային պլան՝ համաձայն ստորև ներկայացված ձևաչափի .

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմակերպություն	*"Գորիսի պետական համալսարան© ՊՈԱԿ*
Ծրագիր	*Ոչ ֆորմալ կրթական գործիքակազմով մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների, մասնագիտական կողմնորոշման ծրագրերի մասին երիտասարդների (այդ թվում՝ արցախյան վերջին պատերազմի մասնակիցների, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդների) իրազեկության և ներգրավվածության բարձրացման դասընթացների կազմակերպում*
Ժամանակահատված	*2022 թ., II – IV եռամսյակներ*

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս											
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Նախապատրաստական աշխատանքներ: Կարողությունների զարգացմանն ուղղված գործիքների և մեթոդաբանությունների նախագծում	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ				x								
2	Վերապատրաստող մասնագետների վերապատրաստմանն ուղղված դասընթացներ	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ, կադրերի մասնագետ, վերապատրաստող մասնագետներ				x	x	x						
3	Երիտասարդների կարողությունների զարգացմանն ուղղված մոդուլների մշակում և իրականացում	Ծրագրի ղեկավար, համակարգող, վերապատրաստող մասնագետներ, հաշվապահ, կադրերի մասնագետ, տեխնիկական աշխատանքների				x	x	x	x	x	x	x	x	

		պատասխանատու												
4	Երիտասարդների շրջանում իրազեկության բարձրացում անձնական և կարիերայի զարգացման համար առկա ռիսկերի վերաբերյալ	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ, կադրերի մասնագետ, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների պատասխանատու				x	x	x	x	x	x	x	x	
5	Երիտասարդների զբաղվածության խթանման ծառայությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ, կադրերի մասնագետ, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների պատասխանատու				x	x	x	x	x	x	x	x	
6	Որակի վերահսկում և մշտադիտարկում	Ծրագրի ղեկավար, համակարգող, հաշվապահ				x	x	x	x	x	x	x	x	x

Ծրագրի շահառուները ու շահագրգիռ կողմերը

Ովքեր են ծրագրի ուղղակի շահառուները: Նկարագրեք ծրագրի շահագրգիռ կողմերին և հետաքրքրված խմբերին և նրանց ներգրավվածությունը ծրագրում:

Ծրագրի մասնակցության գործընթացը ներառական է: Շահագրգիռ կողմերի կարիքների նկատմամբ ուշադրությունը համարվում է ներգրավման մեթոդների հիմքում ընկած հիմնարար սկզբունք: Եթե ֆիզիկական հեռավորությունը խոչընդոտում է ներգրավվածության ավանդական ձևերին, ապա դասավանդման մեթոդաբանությունը կհամապատասխանեցվի ներգրավվածության այլ ձևերի, այդ թվում՝ ինտերնետային հաղորդակցության տարբեր ձևերի: Ծրագրի ուղղակի շահառուները Սյունիքի մարզի Գորիս, Տաթև, Տեղ և Սիսիան համայնքների 16 – 35 տարեկան երիտասարդներ են (արցախյան վերջին պատերազմի մասնակից երիտասարդներ, պատերազմից ներազդված հասարակության այլ շերտերի երիտասարդներ (սահմանամերձ և սահմանապահ դարձած համայնքների երիտասարդներ), երիտասարդ մանկավարժական աշխատողներ, երիտասարդ մանկավարժական ղեկավար կազմի աշխատողներ, սոցիալական հանգամանքներով պայմանավորված բարձրագույն կրթության հնարավորությունների սահմանափակումներով երիտասարդներ), վերապատրաստող մասնագետներ, կրթական հաստատությունների և բիզնես ոլորտի ներկայացուցիչներ, ՏԻՄ ներկայացուցիչներ, որոնց շահերի վրա ծրագիրը կարող է ազդել և որոնք կարող են ցանկացած կերպ ազդել ծրագրի արդյունքների վրա:

Ռիսկերի գնահատում

Որոնք են ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերը և դրանց հաղթահարման ռազմավարությունը:

Ծրագրի իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերի գնահատումը կատարելիս հաշվի են առնվել տարբեր չափանիշներ՝ ներառյալ ծրագրի բնույթը, դրա ազդեցությունը, Սյունիքի մարզում վերապատրաստող փորձառու մասնագետների առկա հնարավորությունների սահմանափակությունը, ծրագրի կատարողականը,

ֆինանսավորումը, հեղափոխերազմական, համաճարակային իրավիճակները, ռեսուրսային բազան: Ծրագրի իրականացման ընթացքում ռիսկերի գնահատումները ժամանակի ընթացքում կկրճատվեն, քանի որ պլանավորվում է վերապատրաստողի փորձ ունեցող տեղական մասնագետների ակտիվ ներգրավվում: Ենթադրվում են TOT վերապատրաստումներ: Նախատեսվում է նախորդ տարիների ընթացքում վերապատրաստման ծրագրերի շրջանակում մշակված մոդուլների թարմացում և նորերի մշակում, նախապատրաստում ուսումնառության առկա, հեռավար, համակցված մոդելներով իրականացմանը: Ենթադրվում է, որ Գորիսի պետական համալսարանի ռեսուրսային և մասնագիտական բազան կծառայի ծրագրի նպատակներին, ինչն իր հերթին չի հանգեցնի այդ մասով ֆինանսավորման պահանջի:

Ծրագրի աշխատակազմը

Նկարագրել ներգրավվող և վճարվող աշխատակիցների և/կամ փորձագետների պատասխանատվության շրջանակը և կցել կենսագրականները:

Ծրագրի մեջ ներգրավված են Գորիսի պետական համալսարանի վարչական և պրոֆեսորադասախոսական կազմերի փորձառու մասնագետներ ու հրավիրված մասնագետներ պրոֆիլային կազմակերպություններից: Վերապատրաստող մասնագետների ցանկը, ըստ նրանց ունեցած պատասխանատվության շրջանակի, բերված է ստորև.

Հ/Հ	Ծրագրի աշխատակազմը, պատասխանատվության շրջանակը	Անունը, ազգանունը, պաշտոնը (կենսագրականները կցվում են)
1.	Ծրագրի ղեկավար Իրականացնում, վերահսկում և հետևում է ծրագրին՝ համաձայն կնքված պայմանագրերի:	1. Մարության Թեհմինա – ԳՊՀ ռեկտորի պ/կ, բ.գ.թ., դոցենտ
2.	Ծրագրի համակարգող Ծրագրի ղեկավարի վերահսկողության ներքո նախագծում և համակարգում է վերապատրաստման առաջարկը շահագրգիռ բոլոր կողմերի հետ:	2. Դինունց Արփինե - ԳՊՀ գիտական կենտրոնի ղեկավարի տեղակալ, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3.	Հաշվապահ Ծրագրի ղեկավարի վերահսկողության ներքո վարում է ծրագրի հաշվապահությունը:	3. Թապտուղյան Ռուզաննա – ԳՊՀ գլխավոր հաշվապահ
4.	Կադրերի մասնագետ Ծրագրի ղեկավարի վերահսկողության ներքո իրականացնում է ծրագրի աշխատակազմի կադրային գործի վարումը:	4. Արկադի Հովհաննիսյան – ԳՊՀ իրավախորհրդատու, անձնակազմի կառավարման բաժնի ղեկավարի փոխարինող
5.	Տեխնիկական աշխատանքների պատասխանատու Ծրագրի համակարգողի վերահսկողության ներքո մասնակցում է սարքավորումների շահագործման և սպասարկման աշխատանքներին՝ սեղմ ժամկետներում ապահովելով անխափան միջավայր:	5. Աշոտ Ֆարամազյան – ԳՊՀ համակարգիչների, տպիչների և ինտերնետային ցանցի տեխնիկական սպասարկող
6.	Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների պատասխանատու Ծրագրի համակարգողի վերահսկողության ներքո մասնակցում է երիտասարդների զբաղվածության խթանման ծառայությունների զարգացմանն ուղղված միջոցառումներին:	6. Բալոյան Սիրուշ – ԳՊՀ ավագ գրադարանավար
7.	Վերապատրաստող մասնագետներ Ծրագրի համակարգողի վերահսկողության ներքո մշակել, իրականացնել դասընթացը՝ պատվիրատուի պահանջներին համապատասխան:	
	1. Հաշվապահական հաշվառում սկսնակների համար	7. Թապտուղյան Ռուզաննա – ԳՊՀ գլխավոր հաշվապահ, դասախոս
	2. Գնումների գործընթացի կազմակերպում	8. Շալունց Արմինե – ԳՊՀ գնումների համակարգող, դասախոս

3. ՀՀ աշխատանքային օրենսդրություն	9. Արկադի Հովհաննիսյան – ԳՊՀ իրավախորհրդատու, անձնակազմի կառավարման բաժնի ղեկավարի փոխարինող
4. Մենեջմենթ (բազային)	10. Պետրոսյան Սյուզաննա – ԳՊՀ հաշվապահ, դասախոս
5. Համակարգչային հմտություններ	11. Դինունց Արփինե – ԳՊՀ դոցենտ, ֆ.մ.գ.թ., ԳՊՀ գիտական կենտրոնի ղեկավարի տեղակալ
6. Թվային դասավանդում	
7. Ադրբեջաներեն	12. Մեսրոպյան Հայկանուշ – բ.գ.դ., դոցենտ
8. Անգլերեն լեզու (բազային)	13. Գալստյան Մարիամ – ԳՊՀ դասախոս
9. Ռուսաց լեզու (հաղորդակցական)	14. Իվանյան Լարիսա – ԳՊՀ դասախոս
10. Մեդիագրագիտություն	15. Միրզոյան Նոնենա – ԳՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի պատասխանատու 16. Թևոսյան Մելանյա – ԳՊՀ ուսանող
11. Ներգրավված քաղաքացի	17. Միրզոյան Նոնենա – ԳՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի պատասխանատու
12. Հաղորդակցման հմտություններ և հոգեբանական տեխնիկաներ	18. Հախվերդյան Նազելի – ԳՊՀ դոցենտ, հ.գ.թ., ԳՊՀ կրթության որակի և ուսանողների կարիերայի աջակցման բաժնի ղեկավարի ժ/պ
13. Սթրեսակայունությունը տարբեր տարիքային և աշխատանքային փորձ ունեցող անձանց մոտ	
14. Հանրային խոսք: Խոսքի մշակույթ	19. Մանուչարյան Սվետլանա – ԳՊՀ դոցենտ, բ.գ.թ., Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ
15. Գրավոր խոսք	20. Թունյան Լիլիթ – բ.գ.թ., ԳՊՀ գիտական քարտուղար, Բանասիրության և պատմահրավագիտության ամբիոնի վարիչի ժ/պ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Կ. Սարգսյան 3,Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀԿՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Գագիկ Սաֆարյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ
Գորիս, Ավանգարդ 2
gorissu@mail.ru
Հ ՖՆ կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900288000012
ՀԿՀՀ 09210606
Դեկան՝
Թեհմինա Մաստոյան

/ստորագրություն/

Կ.Տ.